

HSBC-ն ճանաչվել է «Աշխարհի լավագույն բանկ» Euromoney ամսագրի կողմից

HSBC-ն արժանացել է *Euromoney* ամսագրի «Աշխարհի լավագույն բանկ» 2017թ. գերազանցության մրցանակին, որը ֆինանսական ծառայությունների ոլորտում ամենապատվավոր մրցանակներից է:

Euromoney մրցանակները շնորհվում են՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները՝ ծառայությունների մակարդակը, ֆինանսական գործունեությունը և բանկային ոլորտում գրանցված այլ ձեռքբերումները: Այս տարի կազմակերպիչները ստացել են մոտ 1,500 դիմում աշխարհի տարբեր բանկերի կողմից, որոնք մրցակցեցին համաշխարհային, տարածաշրջանային և ազգային անվանակարգերում մրցանակներին արժանանալու համար:

«Աշխարհում լավագույն բանկ» մրցանակը հանձնվեց HSBC-ի Խմբի գլխավոր գործադիր տնօրենին՝ Ստյուարտ Գուլիվերին, ով նշեց. «Այս մրցանակը հրաշալի կերպով վկայում է HSBC-ի՝ վերջին տարիների ձեռքբերումների մասին: Մրցանակն արտացոլում է մարտահրավերներն ու փոփոխությունները, որոնք մենք հաղթահարել ենք և այն լայնածավալ աշխատանքը, որը պահանջվեց HSBC-ն վերածելու այնպիսի առաջատար բանկի, ինչպիսին է այն այսօր: Մեր գործադրած ջանքերն այժմ տալիս են իրենց արդյունքները»:

Euromoney ամսագրի ներկայացուցիչն իր հերթին նշեց. «HSBC-ն այժմ առավել լավ դիրքերում է, քան երբևէ՝ օգուտներ քաղելու արտասահմանյան կապիտալի և առևտրային հոսքերի ֆինանսավորման առանցքային արժեք ներկայացնող իր առաջարկներից: HSBC-ն բացառիկ միջազգային բիզնես է, որը կարող է շարունակել ներդրումների դիմաց նպաստավոր վերադարձ ապահովել բաժնետերերի համար և օգնել իր հաճախորդներին իրագործելու իրենց նպատակները միջազգային շուկաներում»:

HSBC-ն արժանացել է նաև «Զարգացող շուկաներում աշխարհի լավագույն ներդրումային բանկ» կոչմանը, ինչպես նաև՝ ինը տարածաշրջանային և ազգային այլ մրցանակների:

HSBC-ի գլոբալ բանկային ծառայությունների և շուկաների գծով գլխավոր գործադիր տնօրենը՝ Սամիր Ասաֆը, նշում է. «Այս մրցանակն արտացոլում է մեր միջազգային թիմի կողմից իրականացրած ահռելի աշխատանքը: Մենք մատուցում ենք ֆինանսավորման, խորհրդատվական և շուկայական առաջնակարգ ծառայություններ տարբեր երկրներում՝ օգնելով մեր հաճախորդներին օգտվել միջազգային հնարավորություններից: Այսօր մեր գլոբալ բանկային ծառայությունների և շուկաների եկամուտների ավելի քան կեսը գոյանում է արտասահմանյան գործունեությունից, և մեր շարունակական հաջողությունն ապահովելու գործում առանցքային դեր ունեն գարգացող շուկաները»:

Euromoney-ն նշում է. «HSBC-ն մշտապես առաջատար է այն ոլորտներում, որտեղ առկա է զարգացող շուկաների աճի ներուժ, լինի դա Չինաստանի «Մեկ գոտի և մեկ ուղի» նախաձեռնությունը, թե Մաուրիտիոսի Արաբիայի արժեթղթերի շուկաների բացումը: Դժվար է գերազանցել Բանկի փորձը գործարքային ծառայությունների և կապիտալի շուկաների ոլորտում՝ հատկապես կորպորատիվ հաճախորդների համար»:

HSBC-ն արժանացել է հետևյալ կոչումներին՝

- Աշխարհի լավագույն բանկ
- Աշխարհի լավագույն ներդրումային բանկ զարգացող շուկաներում
- Արևմտյան Եվրոպայի լավագույն բանկ ֆինանսավորման ոլորտում
- Հյուսիսային Ամերիկայի լավագույն բանկ բանկային գործարքների իրականացման ոլորտում
- Ասիայի լավագույն բանկ
- Հոնկոնգի լավագույն բանկ
- Հոնկոնգի լավագույն ներդրումային բանկ
- Մերձավոր Արևելքի լավագույն ներդրումային բանկ
- Մաուրիտիոսի Արաբիայի լավագույն ներդրումային բանկ
- Քաթարի լավագույն ներդրումային բանկ
- Օմանի լավագույն բանկ

Հարցումների դեպքում դիմել HSBC Հայաստանի հասարակայնության հետ կապերի գծով մենեջեր Արմինե Բաբուրյանին,
Հեռախոս՝ + 374 60 655 345 Էլ. փոստ՝ arminebaburyan@hsbc.com

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբն իր հաճախորդներին ծառայություններ է տրամադրում իր մոտ 3,900 գրասենյակներից, որոնք գտնվում են 67 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2017թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,492 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC-ն Հայաստանում

Բանկը հիմնադրվել է 1996թ.-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն «Midland Armenia Bank» ԲԸ անվանումով: 1999թ.-ին վերանվանվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարներին: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30,000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 9 գրասենյակների և մոտ 420 աշխատակիցների միջոցով: 2017թ.-ի հունիսի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 215 մլրդ. ՀՀ դրամ: